ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԽՉՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մխչյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մխչյան, (0235) 6-00-48, mkhchyan.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 27

## ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015Թ.-Ի ԹԻՎ 8 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12 հոդվածի պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Հաստատել համայնքի ավագանու 2015թ.-ի թիվ 8 նիստի հետևյալ օրակարգը.

- ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ,ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ և ՀՈԱԿ-ՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ և ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ 2016Թ.-Ի ՀԱՄԱՐ /ԶԵԿ.Խ.ՊՈՂՈՍՅԱՆ/
- ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ 2016Թ.-Ի ՀԱՄԱՐ/ԶԵԿ.Ն.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/
- ՄԽՉՅԱՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ և ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ /ԾՆՈՂԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ/ ՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ 2016Թ.-Ի ՀԱՄԱՐ/ԶԵԿ.Է.ԹԱՂԼՈՅԱՆ/
- 2015Թ.-Ի ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ/ԶԵԿ.Ն.ԱՎԵՏՅԱՆ/
- 2015Թ.-Ի ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ/ԶԵԿ.Ն.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/
- ԱՎԱԳԱՆՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ/ԶԵԿ.Ե.ԹԱՂԼՈՅԱՆ/

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱՖԻԿ
2. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ
3. ԳՈՒԼՈՅԱՆ ՀՐԱՅՐ
4. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ
6. ՄՈՎՍԻՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԽԱՉԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ
ՄԱՐԶԻ ՄԽՉՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մխչյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մխչյան, (0235) 6-00-48, mkhchyan.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 28

## ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ,ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ և ՀՈԱԿ-ՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ և ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ 2016Թ.-Ի ՀԱՄԱՐ

Առաջնորդվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 26 կետի պահանջներով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Մխչյան համայնքի ղեկավարի,գյուղապետարանի աշխատակազմի և ՀՈԱԿ-ների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնական դրույքաչափերը 2016թ.-ի համար համաձայն հավելվածի

Կողմ -6 Դեմ -0 , Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱՖԻԿ
2. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ
3. ԳՈՒԼՈՅԱՆ ՀՐԱՅՐ
4. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ
6. ՄՈՎՍԻՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԽԱՉԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

Հավելված

Մխչյան գյուղական համայնքի ավագանու

2015 թվականի դեկտեմբերի 18 -ի N 28 որոշման

2016թ.-Ի ՄԽՉՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՀՈԱԿ-ՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 62

2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Աշխատողների քանակը 11

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 240000 |
| ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| Համայնքի ղեկավարի խորհրդական | 1 | 110000 |
| | | |
| | | |
| ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| Աշխատակազմի քարտուղար /1.2-1/ | 1 | 150000 |
| Աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/ /2.3-2/ | 2 | 140000 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/ /3.1-2/ | 2 | 135000 |
| Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-2/ | 1 | 130000 |
| | | |
| ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | |
| Ցրիչ | 1 | 72751 |
| Վարորդ | 1 | 85000 |
| Պահակ հավաքարար | 1 | 72751 |
| Օպերատոր | 1 | 85000 |
| | | |
| | | |
| | | |

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

/Համայնքային ենթակայության հիմնարկ-ձեռնարկությունների աշխատակիցների թվաքանակը և պաշտոնային դրույքաչափերն ըստ հերթականության, այդ թվում՝ գյուղապետարանի պայմանագրային աշխատողների

Աշխատողների քանակը 2

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Տարբեր գործառույթներ իրականացնող աշխատակիցներ | | |
| Հարկահավաք | 1 | 130000 |
| Գերեզմանոցի պահակ | 1 | 72751 |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |

### ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

աշխատողների քանակը 23

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Մանկապարտեզի վարիչ | 1 | 140000 |
| Մանկապարտեզի մեթոդ.մանկ. | 1 | 119200 |
| Դաստիարակ | 4,58 | 119200 |
| Երաժ. դաստիարակ | 0.75 | 119200 |
| Պարուսույց | 0.75 | 119200 |
| Ֆիզ. դաստիարակ | 0,75 | 119200 |
| Դաստիարակի օգնական | 3,7 | 77904 |
| Խոհարար | 1 | 77904 |
| Խոհարարի օգնական | 0.75 | 77904 |
| Բույժ. քույր | 1 | 77904 |
| Լվացքարար | 1 | 72751 |
| օժանդակ բանվոր | 0.5 | 77904 |
| Հաշվապահ | 1 | 72751 |
| Տնտեսվար | 0,75 | 72751 |
| Գործավար | 1 | 77904 |
| Դռնապահ | 1 | 77904 |
| Պահակ | 1 | 72751 |
| Ջնջապան | 0.5 | 77904 |
| Դերձակ | 0.5 | 77904 |

## ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ

*Աշխատողների քանակը 4*

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Կուլտուրայի տան տնօրեն | 1 | 100000 |
| Գեղմասվար | 1 | 77904 |
| Կազմակերպիչ | 1 | 77904 |
| Պահակ | 1 | 72751 |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |

## ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ

աշխատողների քանակը 21

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Տնօրեն | 1 | 110000 |
| Բաժնի վարիչ | 1 | 72751 |
| Հաշվապահ | 1 | 72751 |
| Ցերեկային պահակ | 1 | 72751 |
| Հավաքարար պահակ | 1 | 77904 |
| Գործավար | 1 | 77904 |
| Մանկավարժներ | 9,5 | 77904 |
| Մանկավարժներ | 8 | 72751 |
| | | |
| | | |

## ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխատողների քանակը 1

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Գրադարանի վարիչ | 1 | 77904 |
| | | |
| | | |

Աշխատակազմի քարտուղար՝ Ե. Թադևոսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԽՉՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մխչյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մխչյան, (0235) 6-00-48, mkhchyan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 29

## ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ 2016Թ.-Ի ՀԱՄԱՐ

Առաջնորդվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 18 կետի պահանջներով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Մխչյան համայնքի 2016թ.-ի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱՖԻԿ
2. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ
3. ԳՈՒԼՈՅԱՆ ՀՐԱՅՐ
4. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ
6. ՄՈՎՍԻՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԽԱՉԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

հավելված

# ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016թ.-ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի , շինությունների(ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ հիմնական օբեկտների համար՝
ա) մինչև 300 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների , ինչպես նաև մինչև 200 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար -----------------------------------------------15000 դրամ .

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտի համար՝

բա) 201-ից մինչև 500 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար-------------------30000 դրամ.

բբ) 501-ից մինչև 1000 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար -------------------50000 դրամ.

բգ) 1001-ից մինչև 3000 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար-------------------70000 դրամ

բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ ---100000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝---------------------------------3000 դրամ.

դ) 20 և ավելի ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար--------------------------------5000 դրամ.

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման , արդիականացման , աշխատանքների (բացառությամբՀայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝---------------------------------------3000 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների , վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների , վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է --------------------------------5000 դրամ.

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝------ 2000 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար----2000 դրամ.

5. Համայնքի տարածքում՝
ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 100 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է ------ ------------------------------------------------- ---------------------150000 դրամ:

գ) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ ------------------------ 30000 դրամ:
գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ --2000 դրամ.
ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ -500դրամ.
5¹. Սույն օրենքի 7-րդ հոդվածի «ժ» ենթակետով նախատեսված թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար 50.000 դրամ:

6.Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները),խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար--------------------------------------------------------------------------25 000 դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար------------------------------------------50 000 դրամ.

գ) բաղնիքների /սաունաների/ համար ------------------------------------------------------------300 000 դրամ

դ) խաղատների կազմակերպման համար------------------------------------------------------1 000 000 դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար-------------------------------------------- 500 000 դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար-------------------------------------------------- 150 000 դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝--------------------------------------------------------------------------- 2000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝------------------------------------------------------------ 3500 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝-------------------------------------------------------------------1000 դրամ.

դ) մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը՝ ծխախոտի արտաքին գովազդի համար՝ --5000 դրամ.
ե) դատարկ գովազդային վահանակների համար՝------------------------------------------------ 700 դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել------------------------------------------ 1000 դրամ:

Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50 000 դրամ:

10. Համայնքի տարածքում (բացառությամբ թաղային համայնքների) մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել-----------------------------------------3 000 դրամ:

10.1. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 200000 դրամ:

11. Սույն հոդվածով (բացառությամբ 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի) սահմանված դրույքաչափերի վերին սահմանները քաղաքային համայնքներում կարող են լինել 1.5, իսկ Երևան քաղաքում՝ 3.0 անգամ ավելի:

11.¹. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ, լեռնային և բարձրլեռնային համայնքներում հաշվարկվում են 0.3, գյուղական այլ համայնքներում՝ 0.5, քաղաքային այլ համայնքներում՝ 1.0, իսկ Երևան քաղաքում՝ 7.0 գործակիցների կիրառմամբ:

11.2. Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար,տեղական տուրքը յուրաքանչյուր տարվա համար սահմանվում է՝

ա) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2.500.000 Հայաստանի Հանրապետության դրամ.

բ) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5.000.000 Հայաստանի Հանրապետության դրամ.

գ) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7.000.000 Հայաստանի Հանրապետության դրամ.

դ) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10.000.000 Հայաստանի Հանրապետության դրամ:

## ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

1) Բնակչի պահանջով սեփականաշնորհված , տնամերձ կամ պահուստային հողերը չափելու համար,որպես վարձավճարի չափ սահմանել--------------------------------------------------1000 դրամ

2) Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար------------ 1000 դրամ:

Աշխատակազմի քարտուղար՝ Ե. Թադևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԽՉՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մխչյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մխչյան, (0235) 6-00-48, mkhchyan.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 30

ՄԽՉՅԱՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ և ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ
/ԾՆՈՂԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ/ ՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ 2016Թ.-Ի ՀԱՄԱՐ

Առաջնորդվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 19 կետի պահանջներով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Մխչյանի Երաժշտական դպրոցի ծնողական գումարները հետևյալ չափով.

ա. դաշնամուր - ամսեկան 4000 /չորս հազար/ դրամ

բ. ջութակ - ամսեկան 3500 /երեք հազար հինգ հարյուր/ դրամ

գ. ժողովրդական նվագարաններ պետական սահմանված քանակից ավելի դեպքում ամսեկան - 3000 /երեք հազար/ դրամ

2. Մխչյանի մանկապարտեզի ծնողական գումարները հաստատել հետևյալ չափով.

ա. Ընտանիքից 1 երեխա հաճախելու դեպքում - ամսեկան 5000 /հինգ հազար/ դրամ

բ. Ընտանիքից 1-ից ավել երեխա հաճախելու դեպքում - ամսեկան 4000 /չորս հազար/ դրամ

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱՖԻԿ
2. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ
3. ԳՈՒԼՈՅԱՆ ՀՐԱՅՐ
4. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ
6. ՄՈՎՍԻՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԽԱՉԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԽՉՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մխչյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մխչյան, (0235) 6-00-48, mkhchyan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 31

### ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 2015Թ.-Ի ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Առաջնորդվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 29 կետի պահանջներով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել համայնքի սեփականություն հանդիսացող 2015թ.-ի ամենամյա գույքագրման արդյունքները:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱՖԻԿ
2. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ
3. ԳՈՒԼՈՅԱՆ ՀՐԱՅՐ
4. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ
6. ՄՈՎՍԻՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԽԱՉԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԽՉՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մխչյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մխչյան, (0235) 6-00-48, mkhchyan.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 32

## ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015Թ,-Ի ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 16 հոդվածի 3-րդ կետով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Մխչյան համայնքի 2015թ-ի բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.Վարչական բյուջեի պահուսատային ֆոնդ ծրագրի /11.01.02.51/գործառնական դասակարգման 4891/պահուստային միջոցներ/հոդվածից պակասեցնել 3450000/երեք միլիոն չորս հարյուր հիսուն հազար/դրամ և հատկացնել հետևյալ ծրագրերի հոդվածներին:
1.ա/ Սոցիալապես անապահով անձանց աջակցություն ծրագրի /10.07.01.54/գործառնական դասակարգման 4729/այլ նպաստ բյուջեից/հոդվածին ավելացնել 700000/յոթ հարյուր հազար/դրամ:
1.բ/Արտաքին լուսավորության ցանցի շահագործում և պահպանման աշխատանքներ ծրագրի /06.04.01.52/գործառնական դասակարգման 4212/էներգետիկ ծառայություններ/հոդվածին ավելացնել 2000000/երկու միլիոն/դրամ:
1.գ/Աղբահանություն և սանիտարական մաքրում ծրագրի /05.01.01.51/գործառնական դասակարգման 4213/կոմունալ ծառայություններ/հոդվածին ավելացնել 500000/հինգ հարյուր հազար/դրամ:
1.դ/Կառավարման մարմնի պահպանում ծրագրի /01.01.01.51/գործառնական դասակարգման 4212/էներգետիկ ծառայություններ/հոդվածին ավելացնել 200000/երկու հարյուր հազար/դրամ:
1.ե/Թատերական ներկայացումներ ծրագրի /08.02.05.52/գործառնական դասակարգման 4239/ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/հոդվածին ավելացնել 50000/հիսուն հազար/դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱՖԻԿ
2. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ
3. ԳՈՒԼՈՅԱՆ ՀՐԱՅՐ
4. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ
6. ՄՈՎՍԻՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԽԱՉԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԽՉՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մխչյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մխչյան, (0235) 6-00-48, mkhchyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 33

ԱՎԱԳԱՆՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Առաջնորդվելով <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15 հոդվածի 3 կետի պահանջներով և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 20 կետի պահանջներով, հիմք ընդունելով քաղաքացիներ Կարապետ Ավետյանի և Մամիկոն հակոբյանի դիմումները.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Մերժել քաղաքացի Մամիկոն Հակոբյանին պատկանող «ՎԱԶ 2107» մակնիշի փոխադրամիջոցի մեկ տարվա գույքահարկը զիջելու նրա խնդրանքը՝ քանի որ, նա չի հանդիսանում սոցիալապես անապահով:

2.Մերժել Կարապետ Ավետյանի 0065-0002 ծածկագրի տակ գտնվող հողատարածքից նրան 200ք.մ. ուղղակի վաճառքով հող հատկացնելու խնդրանքը, քանի որ այն հակասում է Հայաստանի Հանրապետության ,,Հողային օրենսգրքի,, 66 հոդվածին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱՖԻԿ
2. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ
3. ԳՈՒԼՈՅԱՆ ՀՐԱՅՐ
4. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ
6. ՄՈՎՍԻՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԽԱՉԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ